ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/18403-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-965-07.05.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 565 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-965-07.05.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարությունը սկզբունքային առաջարկություններ և առարկություններ չունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-965-07.05.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-965-07.05.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ՝ ընդունվելուց հետո երկշաբաթյա ժամկետում գրավոր առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն հեղինակը, խմբակցությունը, Կառավարությունը եւ պատգամավորները:»:

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Առկա իրավիճակը իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, որի 81-րդ հոդվածի առաջին մասը, այդ պահին գործող խմբագրությամբ, սահմանում էր, որ առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն խմբակցությունը եւ Կառավարությունը, իսկ պատգամավորը իրավունք ուներ առաջարկ ներկայացնել շրջանառության մեջ դրված նախագծի փոփոխված դրույթների վերաբերյալ: Այսինքն՝ երկրորդ ընթերցումից առաջ սահմանված էր առաջարկ ներկայացնելու լիազորությամբ օժտված սուբյեկտային նեղ կազմ՝ նման լիազորություն չտրամադրելով անգամ նախագծի հեղինակ պատգամավորին: Իսկ այլ պագամավորների՝ առաջարկ ներկայացնելու իրավունքը սահմանափակված էր փոփոխված դրույթների շրջանակով:

2018 թվականի հունվարի 17-ին հիշյալ հոդվածուն կատարվել է փոփոխություն, որով սուբյեկտային կազմը լրացվել է, եւ նախագծի հեղինակին եւս իրավունք է տրվել առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում, սահմանված ժակետում առաջարկ ներկայացնել նախագծի վերաբերյալ, սակայն մյուս պատգամավորները նորից մնացել են գործող սահմանափակման մեջ: Ավելին, հիշալ փոփոխությամբ ավելացվել է ՄԻԱՅՆ բառը, հստակեցնելով եւ եւս մեկ անգամ շեշտադրելով, որ առաջարկները կարող են վերաբերել նախագծի Միայն փոփոխված դրույթներին:

Հետեւաբար, գործող իրավակարգավորումների համաձայն՝ նախագծի հեղինակ չհամարվող պատգամավորը շրջանառվող նախածի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ կարող է անել միայն առաջին ընթերցման համար, իսկ դրանից հետո իր առաջարկը կարող է վերաբերվել ոչ թե նախագծին ընդհանրապես, այլ միայն նախագծի փոփոխված դրույթներին:

Նման իրավակարգավորումը որեւէ իրավաչափ նպատակ չի հետապնդում, փոխարենը՝սահմանափակում է պատգամավորի իրավաստեղծ գործունեությունը՝ կաշկանդելով նախագծի քննարկման կոնկրետ փուլում տեսակետ հայտնելու, առաջարկ ներկայացնելու իրավունքի իրացումը: Շրջանցելու համար այս արգելքը, գործականում պատգամավորը ստպված է լինում իր առաջարկը ձեւակերպել խմբակցոյթան կամ այդ փուլում իրավասու այլ սոյեկտի անունից, եթե վերջիններս առաջարկի հետ կապված առարկություններ չունեն:

Հակառակ պարագայում առաջարկը որեւէ կերպ չի կարող ներկայացվել եւ քննարկվել:

Բացի այդ, երբեմն գործնականում ծագում է իրավական վեճ՝ պատգամավորի ներկայացված առաջարկը վերաբերում է բուն նախագծին, թե նախագծի փոփոխված հոդվածին, քանի որ նախագիծը լրամշակման ընթացքում կարող է էապես տարբերվել նախնական տարբերակից:

2. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կընձեռնի օրինագծի ոչ հեղինակ պատգամավորին եւս գրավոր առաջարկ ներկայացնելու նախագծի վերաբերյալ: